

սին, սակայն քահանայք յայտարարեցին, որ առանց անմիջական նպաստի պիտի չկարողանան վերադառնալ, որովհետեւ սպառնալիքներ եղած են իրենց ձեռնունայն դառնալու պարագային։ Անեղանելի կացութիւն։ Օրհնեալ ըլլայ Կահիրէի Հ. Բ. Միութիւնը որ կանխահոգութեամբ մասնակի դիւրութիւն մը ընծայած էր մեզ։ յուլիս 13 ամսաթիւ գրութեամբ մը 50 եգիպտ. ոսկւոյ չէկ մը դրած էր մէր յարամագրութեան տակ ամենէն կարօտ կեդրոններուն յատկացնելու յանձնարարութեամբ։ Այդ չէկը յանձնեցինք քահանայից և ճամբու դրինք։ գրեցինք ի Զէյթուն և խօստացանք. ամեն միջոց ի դուրս գնել՝ զիրենք փրկելու համար սովու ժանիքներէն. գրեցինք ի Պատրիարքարան և ի Կահիրէ անմիջական պէտքը շեշտելով. նաեւ աւելորդ չհամարեցինք ներկայ հրապարակային կոչն ուղղել ընդհ. ազգին, որ փութայ օգնութեան ձեռք տալ մահամերձ Զէյթունին, որ ուրիշ բան չուզեր, այլ հաց և դարձեալ հաց։

Այս հոգեշունչ կոչը գերեզմանի եզերքէն կը հասնի մեզ, որուն միայն արձագանգն է ներկայս՝ «Զէյթուն հաց կը խնդրէ ազգէն»։

Մաղթելով բովանդակ ազգին ազատութիւն ամեն վտանգներէ և փորձութենէ։

Մնամ աղօթարար

Սահակ Կաթուղիկոս Կիլիկիոյ.

ՍՈՎ ՄՇՈՅ ՄԷՁ

Ժողովուրդը յուսահատութեան զենիթն հասած է, ամէն բանէ աւելի հացի խնդիրն է որ կը յուզէ զինքը, կը խռովէ իր հոգին, բայց աւանդ որ տարիներէ ի վեր լքուած ու կեղեքուած խեղճ ժողովրդի խնդիրը նկատողութեան առնող չկայ՝ և ոչ իսկ գանգատին լսող մը։

Սովը հետզհետէ կը սաստկանայ, ցորենի դինը զգալի առաւելութեամբ կը բարձրանայ՝ մինչ ժողովուրդը իբր

պաշար ձմեռի համար ափ մը հատիկ ամբարած չունի, մինչ շատերը իրենց թշուառ ընտանեաց ու զաւակաց «հաց» տղեխարշ աղաղակին գոհացում՝ տալ չեն կրնար, մինչ շատերը օրերով ու շաբաթով անօթի մնալու դատապարտուած են և մինչ շատեր ալ գաղթելու կը պատրաստուին։ Ո՞ւր է ուրեմն Սահմանադրութիւնը, հաւասարութիւն և այլք, ինչ որ գործնականին մէջ գոյութիւն չունի տոտ, Բիսուն տարիներէ ի վեր ժողովուրդը կեղեքող ու հարստահարող միւլնթազիմները, սովին հիմնադիրները, ցորենները ամբարած են և քառապատիկ ու հնգապատիկ գինով ժողովուրդին պիտի կերցնեն, այդ մասին Սահմանադրութիւնը իր հեղինակութիւնը չը պիտի ցուցնէ։

Մշոյ և Պուլանգի այս տարուան ցորենի բերքը կրնամ ըսել որ դետեր կը կասեցնէ ու ծովեր կը ցամքեցնէ, ուր է հապա, ինչո՞ւ ցարդ հատ մը ցորեն իսկ հրապարակ չէ ելած ծախուելու, եթէ այսպէս շարունակուի, թերևս ժողովուրդը տարբեր միջոցի մը դիմէ ցորեն ձեռք ձգելու համար, քանի որ անօթութենէ ամեն բան կը յուսացուի։

Թուէս ինը օր առաջ Մխայի Յարութ անունով պատուական երիտասարդ մը բառի ամենայն առժամը տնօթութենէ կնքեց իր մահկանացուն, իսկ դժբաղդին ընտանիքը չի կարենալով իր նորածին արու դառնուկին պէտք եղած սնունդ մատակարարել, զայն ալ յանձնեց հողերուն ու ինքը քաշուեցաւ սրբանոցը սովամահ չլլալու համար։

Ո՞վ մարդասիրական ընկերութիւնը, մեծահարուստ անձնաւորութիւնը, փարթա՞ տեարք, տիկնայք, ճօխ սեղան վայելող անհոգներ, պահ մը ուշադրութիւննիդ դարձուցէ՞ք պատմական Տարօնոյ աշխարհի հերոսներու դըժբաղդութեան ու թշուառութեան վրայ, անո՞ք էին որ իբր ուխտեալ զինուորք արգարութեան կռուեցան բռնակալութեան դէմ, կեանք, ինչք և նոյն իսկ պատիւ վրայ տուին, պահ մը ձեր քսակներու կապերը արձակ պահեցէ՞ք այդ դիւցազն թշուառներուն օգնելու համար։


Եթէ վայրկենապէս ամբարտած ցորենները հրապա-

րակ նետելու և միջակ գինով ծողովորդին հրամայելու միջոցներ ձեռք չառնուին և ուէ արտաքին օգնութիւնք չհասնին Մշեցիին, կը հաւատեամ ապնիւ ընթերցողին որ իբր սե թաղթերու գպիր, ամեն շաբթու սովամահներու թիւը պիտի ներկայացնեմ Պատ. մանգումէին:

* * Առաջնորդարանը թափուր վիճակ մը ունի. հետեալը Խարախանեան Ս. Հօր ներկայութիւնը անհրաժեշտ կը նկատուի: Խարախանեանը սպասեցնելու պէտք չկայ. պէտք է անմիջապէս ճամբու հանել՝ եթէ Կեդր. Վարչութիւնը չօղեր որ Մշեցին նեղուի առաջնորդի բացակայութենէն:

ՄԻՔԷԼ. ՇԱԽԱՐՇ

Մուգ, 8 Հոկտ. 1908 թ.



ՀԱՅԱՐԱՆԿ ԳԼԽԱՌՆԵՐՈՒՆ ԽԵՂՃՈՒԹԻՒՆԸ

Տեղապահ Սրբազան Հօր սնորհմութեամբ հետեւեալ նամակը դրկուած է վանառական դասուն:

Մուշ, Վան, Բաղէշ, Խնուս և Սասուն սովը տիրած է և նոյն տեղերու Հայ բնակիչներ ընտանեօք ո՛չ միայն հացի կարօտը կ'ըաշեն, այլ և բոլորովին մերկ ըլլալով՝ վերահաս ձմրան իրենց կեանքին ուղառնացող մահուան վտանգներուն հանդէպ այժմէն խակ սահմակած են, հաց և հագուստ կ'հայցեն:

Իրանց այս ամենաոտակալի վիճակին մէջ Ազգ. Պատրիարքարանը կ'հարկադրուի հաց և հագուստ ճարելու համար բարեգութ ազգայնոց դիմել:

Արդ՝ յանուն յիշեալ դաւառացի ամենախղճալի ազգայնոց կ'խնդրուի Ձեր ազնուութենէն որ բարեհաճի խղճովին ճեմակեղինաց համար բրդեղէն կերպաս զրկել ի Պատրիարքարան, որպէս զի կարել տրուելով փութացուի յիշեալ տեղերը:

Ողջունել սիրոյ, սրտագին օրհնութեամբ և անկեղծ յարգանքօք:

Մնամբ Աղօթարար Պատրիարքական Տեղապահ
ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴ. ԴՈՒՐԵԱՆ